

MICHEL VAN ESBROECK, *Le résumé Syriaque de l'Agathange*, „Analecta Bollandiana“, t. 95, fasc. 3—4, Bruxelles, 1977, p. 291—358.

ՄԻՇԵԼ ՎԱՆ ԷՍԲՐՈԵԿ, Ագաթանգեղոսի ասորերեն համառոտ խմբագրությունը, «Անա-
լեկտա Բոլանդիանա», հ. 95, № 3—4, Բրյուսել, 1977, 291—358 էջ:

Ագաթանգեղոսի Պատմությունը V դարի հայկական այն եզակի աղբյուրներից է, որը դեռ շատ վաղուց ծանոթ է եղել քրիստոնյա ժողովուրդներին և թարգմանվել է հունարեն, արաբերեն, ասորերեն, լատիներեն, վրացերեն, սլավոներեն և այլ լեզուներով: Ինչպես հայերեն, այնպես էլ վերահիշյալ լեզուներով բնագրերի հրատարակությունները նպաստել են, որ Ագաթանգեղոսի պատմությունը միշտ էլ գիտնականների ուշադրության կենտրոնում լինի և այդ հարցի շուրջ դրվեն բազում ուսումնասիրություններ: Դեռ 1762 թ. Հ. Ստիլտինգը հրատարակում է Ագաթանգեղոսի Պատմության հունարեն մի թարգմանությունը և լատիներեն համառոտ մի խմբագրությունը (Acla Sanctorum, Septembris, t. VIII, Antverpia, 1762), մետ-
չիի դարձնելով այն Եվրոպայի մասնագետներին: Հետագայում Պոլ դը Լազարդը այն ոչ միայն վերահրատարակում է, այլ նաև դրան կցված իր ուսումնասիրության մեջ այն միտքն է հայտնում, որ Ագաթանգեղոսի Պատմությունն առաջին անգամ ասորերեն է գրվել և մեզ հասած բոլոր խմբագրություններն էլ ասորերենից թարգմանություններ են (Agathangelus und die Akten Gregors von Armenien, Göttingen, 1888, pp. 127—129).

Հ. Տաշյանն իր «Ագաթանգեղոս առ Գեորգա ասորի եպիսկոպոսին և ուսումնասիրություն Ագաթանգեղա գրոց» (Վիեննա, 1891) երկում, կանգ է առել այդ հարցի վրա և ցույց տվել, որ Պոլ դը Լազարդի հրատարակած հունական տարբերակի ասորական հետքերն այնքան շնչին են ու աննշան, որ ճիշտ չէր լինի Ագաթանգեղոսի սկզբնագիրը ասորերեն համարել: Նա բազում փաստերի հիման վրա եզրակացրել է, որ Ագաթանգեղոսի Պատմությունը առաջին անգամ գրվել է հայերեն և հետո է, որ հայերենից թարգմանվել է այլ լեզուներով: Իր այս տեսակետը հաստատելու համար նա վկայակոչում է VIII դարի հեղինակ, արաբաց եպիսկոպոս Գեորգի ասորերեն մի նամակը, որը գրվել է 714 թ.: Այդ նամակի V. գլուխը վերաբերում է Գրիգոր Լուսավորչին: Այն ուսումնասիրելուց հետո նա եզրակացնում է, որ «Գեորգա տեսածը չէր այժմու հունարեն Ագաթանգեղոսն, որ լոկ թարգմանություն է հայուն, վասն զի արդեն ցայժմ ըսվածներեն ակնհանգիման է՝ որ այն ասորին հէականս երբեմն կը տարբերեր հԱգաթանգեղեան, և կամ ըսենք՝ չէր այն ասորի բնագիրն արդի քաղաղըյալ Ագաթանգեղոսին, այլ նախնական Ագաթանգեղոսներեն մին» (նույն տեղում, էջ 38): Այսպիսով Հ. Տաշյանը գտնում էր, որ Գեորգ ասորի եպիսկոպոսը իր նամակը շարադրելիս օգտվել է Ագաթանգեղոսի Պատմության հայկական այնպիսի մի խմբագրությունից, որը մեզ չէր հասել:

Ն. Մառը ագաթանգեղոսագիտությանը մեծ ծառայություն մատուցեց, երբ Սինայի անապատի ս. Կատարինեի IX դարի № 460 արաբերեն ձեռագրից հայտնաբերեց Գրիգոր Լուսավորչի արաբերեն մի վարձը՝ թարգմանված՝ հունարեն այնպիսի մի օրինակից, որի հայերեն սկզբնագիրը մեզ չի հասել (Н. Марр, Крещение армян, грузин, абхазов и аланов святым Григорием, СПб., 1905): Նա մանրամասն քննելով արաբերեն այս բնագիրը, եզրակացրեց, որ այն սկզբում եղել է հայկական մի խմբագրություն և դրանից էլ թարգմանվել է հունարեն և հունարենից էլ արաբերեն: Իսկ ինչ վերաբերում է Գեորգ արաբաց եպիսկոպոսի նամակին, Ն. Մառը հայտնում է այն կարծիքը, որ նա իր նամակը շարադրելիս ձեռքի տակ ունեցել է հունարեն այս օրինակը (նույն տեղում, էջ 64):

Ն. Մառի այն ենթադրությունը, որ արաբերեն այս բնագիրը նախ հայերենից հունարեն էր թարգմանվել և ապա հունարենից էլ արաբերեն, հաստատվեց, երբ Եվրոպացի ագաթանգեղոսագետներից Ժ. Գարիտը հրատարակեց Ագաթանգեղոսի Պատմության իր հայտնաբերած

Հունարեն մի նոր ասորերկրակր (G. Garrite, Documents pour l'étude du livre d' Agathange, Vatican, 1945).

Այս հարցի համար կարևոր նշանակություն ունեցավ նաև այն, երբ Ա. Տեր-Ղևոնդյանն էլ հրատարակեց Աղաթանգեղոսի պատմության արաբերեն մի այլ թարգմանությունը, որը դրանվել էր դարձյալ Սինայի անապատի ս. Կատարինեի վանքի արաբերեն № 395 ձեռագրից: Նա ևս իր առաջարկում ցույց է տալիս, որ արաբերենն էլ Հունարենից է թարգմանվել (Ա. Տեր-Ղևոնդյան, Աղաթանգեղոսի արաբական նոր խմբագրությունը, Երևան, 1968, էջ 23):

Ուշագրավ է այն, որ Ն. Մառի ու Ժ. Գարիտի հրատարակած երկու այս խմբագրությունները Ժ. Գարիտի ու ապա Ն. Ակինյանի կողմից «Վարձ» են անվանվել:

Արաբերեն նման մի վարք ունիանվել է «Նեստորական պատմություն» աշխատության մեջ «Վարք Գրիգորի անունով (Addaï Scher, Histoire Nestorienne, Chronique de Séert, «Patrologia Orientalis», Paris, 1908, p. 217): Այն շատ համառոտ է, բայց իր բնույթով ու բովանդակությամբ ավելի մոտ է կանգնած Գևորգի աղբյուրին: Մեր «Հայ-ասորական հարաբերությունների պատմությունից» դրքում (Երևան, 1970) անգրագատնալով Գևորգի նամակի ու «Նեստորական պատմության» միջև եղած կապին, գրել ենք, որ զրանց մեջ կան Գրիգորի վարքի նախնական խմբագրություններից մեկի ընդհանուր գծերը (նույն տեղում, էջ 189):

Այս ենթագրության հշմարտացիությունը հաստատող լավագույն փաստերից մեկն այն էր, որ Ժ. Գարիտը 1965 թ. Մակեդոնիայի Օքրիդա քաղաքի աղգային թանգարանից հայտնաբերեց ու հրատարակեց Գրիգոր Լուսավորչի վարքի Հունարեն այնպիսի մի նոր տարբերակը, որը կապ ուներ Գեորգի 714 թ. գրած նամակի հետ (G. Garrite, La vie grecque inédite de St. Gregoire d'Arménie, «Analecta Bollandiana», t. 83, fasc. 3—4, 1965): Գիտնականը այդ վարքն ուսումնասիրելուց հետո ցույց է տալիս, որ Գեորգը ոչ միայն իր ձեռքի տակ ունեցել է վերոհիշյալ խմբագրության օրինակներից մեկը, այլ նաև այդ օրինակից որոշ հատվածներ ընդօրինակել է:

Այդ հարցի լուսարանման ու ավելի հստակացման համար կարևոր դեր կարող էր խաղալ ասորերեն մի օրինակի հայտնաբերումը, և պիտի ասել, որ այդ ուղղությամբ առաջին քայլը կատարվեց, երբ Մ. Վան էսբրոեքը Երուսաղեմի Հակոբիկյան ասորիների ս. Մարկոս վանքի ասորատառ արաբերեն (Քարչունի) մի ձեռագրից հայտնաբերեց ու հրատարակեց «Հայոց կաթողիկոս ս. Գրիգորի վարքը» աշխատությունը (M. Van Esbroeck, Un nouveau témoin du livre d'Agathange, «Revue des Etudes Arméniennes», t. VIII, Paris, 1971, pp. 13—167): Հետաքրքրականն այն էր, որ ձեռագրում եղած վկայության համաձայն 1732 թ. Քարչունի այս օրինակը ասորերենից թարգմանվել է 1178 թ. մի ասորական ձեռագրից: Այս փաստը գիտնականին ոգևորեց և նա տյգ ուղղությամբ իր որոնումները շարունակեց: Բարբախտաբար նրա այդ փորձերը հաջողությամբ պսակվեցին և, ի վերջո, նա Դամասկոսի պատրիարքարանից հայտնաբերեց ասորերեն № 12/18 ձեռագիրը (1184 թ. կամ 1185 թ. գրված), որի մեջ կար Գրիգոր Լուսավորչի ասորերեն համառոտ մի վարքը, որը հրատարակեց Ֆրանսերեն թարգմանությամբ հանդերձ: Նախարանում խոսելով ասորական այս ձեռագրի հետ կապված որոշ մանրամասնությունների մասին, նա գրում է, որ հենվելով Սերաստիան Բրոքից ստացած մի նամակի (1972 թ. ապրիլ) տվյալների ու ձեռագրական փաստերի վրա, եկել է այն եզրակացության, որ ասորական վերոհիշյալ ձեռագիրը պատկանում է հայտնի պատրիարք ու նշանավոր պատմիչ Միքայել Ասորու գրչին: Ասորի պատրիարքի՝ հայկական այս աղբյուրի նկատմամբ ունեցած հետաքրքրությունը պիտի բացատրել այն սերտ կապերով, որ նա ունեցել է հայերի ու հայոց կաթողիկոսական աթոռի հետ:

Իսկ ինչ վերաբերում է ասորերեն այս բնագրին, Մ. Վան էսբրոեքը եզրակացրել է, որ ասորերենը թարգմանվել է վտղ հայկական այնպիսի մի խմբագրությունից, որը մեզ չի հասել: Հայկական այդ խմբագրությունը, գրում է նա, պետք է, որ կազմված լիներ VII դարի սկզբներին, 604—610 թթ. միջև ընկած ժամանակաշրջանում, այսինքն այն ժամանակ, երբ Հովհան Կաթողիկոսը թողնելով Ավանի իր կաթողիկոսանիստ աթոռը, գնում է Կարին-Թեոդոսիոպոլիս քաղաքը: Եվրոպացի գիտնականը նման եզրակացության է եկել, անկասկած, նկատի ունենալով այն փաստը, որ VI դարի վերջերին քաղկեդոնական դավանանքը ընդունած հայերի ազդեցությունը բյուզանդական Հայաստանում ուժեղացել էր, և նրանք կայսրության անմիջական թելադրանքով և Հովհան Եպիսկոպոսի գլխավորությամբ 590 թ. Ավանում, Դվինի հայրապետական աթոռին բազմած Մովսես Բ Նղիվարդեցի կաթողիկոսին հակառակ (որն այն ժամանակ գտնվում էր պարսիկների քաղաքական ազդեցության ներքո), ստեղծեց Դվինից ոչ հեռու

Ավանում՝ բյուզանդական Հայաստանում, երկրորդ հակաթու կաթողիկոսությունը: Եվրոպացի-գիտնականի համար նման եզրակացության հիմք է հանդիսացել նախ այն փաստը, որ այս խմբագրության վերջում տեղեկություն կա այն մասին, որ Հերակլ կայսրը (640—641) թոր-դանում հոյակապ եկեղեցի է կառուցում Գրիգոր Լուսավորչի նշխարների վրա, որոնք Զենոն-կայսեր ժամանակ գտնվել էին ինչ որ Ամրա (Գառնիկ) հովվի կողմից ու այնտեղ բերվել: Բացի այդ, նաև այն փաստը, որ այս խմբագրության մեջ Հռիփսիմյանց կույսերը, որոնք թվով յոթնասուն էին, Հռոմից, ինչպես մեզ հայտնի է, ոչ թե գալիս են Վաղարշապատ, այլ Հայաստանում երկու մասի են բաժանվում. նրանցից քառասունը բնակություն է հաստատում Դվինի գիմնաց գտնվող մի ավերակ հնձանում, իսկ մնացածը դնում է Բերգար քաղաքի մոտակայքում գտնվող Ավավան ու այնտեղ էլ ապրում: Ս. վան Էսբրոեքն անդրադառնալով Ավավան ու Բերգար տեղանուններին, գտնում է, որ Ավավանը Ավանն է, որը ասորերենում շատ դյուրին կարող էր աղավաղվելով փոխվել Ավավանի: Իսկ ինչ վերաբերում է Բերգարին, ապա դա, անկասկած, Բերդ Արինն է, այսինքն Արին բերդը, էրբունին (M. van Esbroeck, Le résumé..., p. 293, n. 1): Մեր կարծիքով խոսքը այստեղ ոչ թե Բերդ Արինի կամ Արին բերդի մասին է, այլ Բերկրացվոց երկրի կամ գավառի: Ահա թե ինչ է գրում ակադ. Ս. Երեմյանը Բերկրացվոց գավառի մասին. Բերկրացվոց գավառը Կրեբեաց գավառն է, «Կալումբրիկ-գաղ լեռան» (2250) արևմտյան փեշերին գտնվող լեռնանցքը, որտեղով անցնում է Զուլամբրիկից դեպի Նոր-դուզ (այժմ՝ Մամուրիթյունի մարզ) տանող ճանապարհը: Կրեբեաց լեռնանցքը գտնվել է Քուվմա-Արծրունու (III, ԻԲ, էջ 260) մոտ հիշվող Կրեբեաց գավառում, որ համապատասխանում է ասորա-բաբելական արձանագրությունների KIRGUR երկրին և համապատասխանում է Պատմութիւն սրբոց Հռիփսիմեանց» վարքի «Բերկրացաց գաւառ»-ին (ճիշտ ընթերցումը պիտի լինի՝ Բերկր/երկ/ացաց գաւառ): Կրեբեաց-Կիրուրի գավառը տեղագրվում է Լեվին-սու գետի հովտում (Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 61): Իսկապես, մեզ հասած Պատմութիւն սրբոց Հռիփսիմեանց» փորձածավալ աշխատության մեջ տեղեկություն կա այն մասին, որ այս կույսերը Հռոմից փախչելով գալիս են Սրուսաղեմ և այնտեղ էլ «Տեսիլ երևեալ սրբոցն, և հրաման առեալ զնալ ի Հայք յերկիրն Արարատեայի բաժին Քաղէփոս առաքելոյն» («Մովսէսի նորենացուց Մատենագրութիւնք», Վենետիկ, 1865, էջ 299): Ըստ այդ տեսիլի նրանք գնում են ընդ մէջ Կորդուաց ընդ լեռն Սողոմի ի Բերկրաց-ւոց գաւառին» (նույն տեղում, էջ 300): Բերկրացվոց գավառում գտնվում էր Բերկրի գյուղը. որը հետագայում դարձել էր բերդաքաղաք (Մ. Հովհաննեսյան, Հայաստանի բերդերը, Վենետիկ, 1970, էջ 281):

«Պատմութիւն սրբոց Հռիփսիմեանց»-ում, ինչպես տեսնում ենք, վկայություն կա այն մասին, որ Հայաստանը քարոզության համար Բաղնոս առաքյալին էր բաժին ընկել: Իսկ նման կարևոր փաստը զարմանալի ձևով պակասում էր կամ չկար Ազաթանգեղոսի՝ մեզ հասած Պատմության խմբագրության մեջ: Ահա այս տեսակետից մեծ առավելություն է, և ազաթանգեղոսագիտության համար շատ հետաքրքրական նշանակություն կարող է ունենալ այն, որ ասորերեն մեզ հասած այս համառոտ պատմությունը սկսում է Թաղնոս առաքյալի Հայաստանում քարոզելու ու այնտեղ նահատակվելու դեպքերի նկարագրությամբ, մի հանգամանք, որը տրամաբանորեն էլ այդպես պետք է լիներ, և չգիտես ինչու՞ չի պահպանվել մեզ հասած հայկական մյուս խմբագրությունում:

Համենայն դեպս ասորերենում Թաղնոս առաքյալի Հայաստանում քարոզելու ու այնտեղ նահատակվելու պատմության առկայությունը մեզ մտածել է տալիս, որ նրա թարգմանության համար հիմք ծառայած հայկական օրինակը ունեցել է մի սկզբնաղբյուր, որը վաղ շրջանից էր:

Եթե, ինչպես մասնագետներն են կարծում, Ազաթանգեղոսի Պատմության մեջ հասած խմբագրությունը Մեսրոպ Մաշտոցի կամ նրա աշակերտներից մեկի՝ հատկապես Կորյունի ձեռքով է կատարված, այսինքն V դարի առաջին կեսին, մինչև Քաղկեդոնի 451 թ. ժողովը, երբ եկեղեցիների միջև առաքելականության հարց չէր կարող գոյություն ունենալ, ապա այդ ժողովից հետո իրերի դրությունը փոխվում է, և V դարի վերջին քառորդին՝ Զենոն կայսեր ժամանակ (477—491), երբ նա քաղաքական նկատառումներով որոշ բարյացակամություն է հանդես բերում հակաքաղկեդոնական տարրերի նկատմամբ, և այդ նպատակով հանգամանքներից օգտվելով միաբնակ զավանսների հետևորդները աշխուժացնում են իրենց գործունեությունը, հայ եկեղեցին ևս միջոցներ է որոնում իր դիրքերն ամրացնելու համար, և այդ կարևոր միջոցներից մեկն էլ, մեր կարծիքով, Ազաթանգեղոսի Պատմության այս նոր խմբագրությունն է, որտեղ Գրիգոր Լուսավորչի ներկայացված է արդեն որպես Բաղնոս առաքյալի գործի շարունակողը: Կարծում ենք, որ նման խմբագրության համար հարմար առիթ է լինում

Գրիգոր Լուսավորչի նշխարների գյուտը Զենոն կայսեր ժամանակ, երբ Ամրա (Գառնիկ) անունով վանականը Հայտնաբերում է դրանք ու տանում Քորդան՝ Դարանաղի գավառը։ Այս առիթով կազմակերպված հանդիսություններն էլ այդ նպատակին են ծառայեցվում և հիմք դառնում Ազաթանգեղոսի Պատմության այն խմբագրության, որը մեզ չի հասել։ Սակայն այդ խմբագրությունը ժամանակի ընթացքում երբեմն փոփոխվել է, և դրա մեջ մտել են նոր հատվածներ։ Մեր կարծիքով այդպիսին է Գրիգոր Լուսավորչի Հոռոմ գնալու և Հոռոմի պապից կաթողիկոսական աստիճան ստանալու պատմությունը, որը ավելի ուշ ժամանակ, հատուկ նպատակով հերյուրված մի զրույց է, մի փաստ, որին ուշադրություն չի դարձրել Մ. վան էսքրուքը, երբ հրատարակել է Ազաթանգեղոսի Պատմության համառոտ ասորերեն բնագիրը։ Մեզ նման եղրակացության է բերել այն իրողությունը, որ Գևորգ արարաց եպիսկոպոսը 714 թ. իր նամակը գրելիս, ինչպես ժ. Գարիտն ու Մ. վան էսքրուքն էլ ցույց են տալիս, օգտվել է այս խմբագրությունից, որտեղ, սակայն, խոսք անգամ չկա Գրիգոր Լուսավորչի Հոռոմ գնալու մասին, այլ ընդհակառակը, այնտեղ ասվում է, որ Գրիգոր Լուսավորչը գնացել է Կապադովկիայի Կեսարիա քաղաքը նույն քաղաքի Լեոնդիոս մետրոպոլիտից էլ եպիսկոպոս է ձեռնադրվել։ Այս փաստերի տարբերությունը խոսում է այն մասին, որ դեռ 714 թ. Ազաթանգեղոսի Պատմության մեղ չհասած խմբագրության մեջ չէր ավելացված Գրիգոր Լուսավորչի Հոռոմ գնալու ու Հոռոմի պապից կաթողիկոսական աստիճան ստանալու զրույցը։ Ուրեմն, դա ավելի ուշ է եղել, և դա էլ հաստատում է, որ Ազաթանգեղոսի Պատմության ասորերեն համառոտ այս բնագրում էլ ավելի ուշ ավելացումներ են կատարված, և Գևորգ արարաց եպիսկոպոսի ձեռքին եղել է մեզ չհասած հայկական խմբագրության այդ չփոխված օրինակը։

Այսպես ուրեմն, Ազաթանգեղոսի Պատմության ասորերեն համառոտ այս բնագրի հրատարակությունն էլ, ճիշտ է, չի օգնում լուծելու այս աղբյուրի հետ կապված բազում առեղծվածները, բայց և այնպես արժանի նպաստ է բերում այդ հարցերի քննարկմանն ու որոշ փաստերի լուսարանմանը, և այդ տեսակետից էլ այն պետք է ըստ արժանիության գնահատել։

ՀԱՅԿ ՄԵԼՔՈՆՅԱՆ.

Պատմական գիտությունների թեկնածու։